7409

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«30» 06 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 182 - 25

Նախաձեռնող՝ ***«Հայնախագիծ» ԲԲԸ***
ք. Երևան, Չարենցի փ. 1

Գործունեությունը՝ ***Տաշիր բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցում***
Լոռու մարզ, Տաշիր համայնք

Առդիր՝ 5 թերթ:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 182 - 25

«30» հունիսի **2025թ.**

Տաշիր համայնքի Տաշիր բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Հայնախագիծ» ԲԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագիծ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Տաշիր համայնք, Տաշիր բնակավայր

Ներածական մաս. «ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ -ն նախատեսում է Տաշիր համայնքի Տաշիր բնակավայրի Դպրոցականների փողոցում գտնվող նախկին դպրոցի տարածքում կառուցել նոր միջնակարգ դպրոց: Ծրագիրն իրականացվելու է ՀՀ կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ» ծրագրի շրջանակներում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ: Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք են հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 18042025-06-0067 և Տաշիր համայնքի ղեկավարի կողմից տրամադրված N ՆԹ-2642-25 /տրված՝ 21.04.2025թ./ նախագծման թույլտվությունը:

Հողամասերի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են հայցվող տարածքում: Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Նկարագրական մաս. Միջնակարգ դպրոցի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է Տաշիր բնակավայրում:
Կառուցապատման ենթական հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 1.6592 հա:
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ ..... 3666.0 մ² (22.1%) է,
ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ ..... 7149.7 մ² (43.1%) է,
ԱՆՋՐԱՆՑԻԿ ..... 5.296 մ² (34.8%)
ՋՐԱՆՑԻԿ ..... 659.4 մ²

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ՀՀ ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

Գազամատակարարման, էլեկտրոմատակարարման և ջրամատակարարման համար կառուցապատողը դիմել լիազորված մարմիններին համապատասխան տեխնիկական պայմաններ ստանալու համար:

Համաձայն նախագծի կաթսայատունը նախագծվել է 432 հոգանոց դպրոցի սպասարկման համար:

Հողատարածքը ծանրաբեռնված է հին դպրոցի /3492,7քմ/ և կաթսայատան /124,4քմ/ շենքով, որոնք նախատեսվում է ապամոնտաժել: Քանդման արդյունքում շինաղբի ծավալը կկազմի 2200 մ^3, այն կտեղափոխվի համայնքի հետ նախապես համաձայնեցված աղբավայր: Նոր միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքները կսկսվեն քանդման աշխատանքները ավարտելուց հետո:

Կառուցապատման ենթակա տարածքի հարևանությամբ են գտնվում մեկ կամ երկու հարկանի բնակելի տներ, հեռավորությունները դպրոցի մասնաշենքից կազմում են 18-ից 64մ:

Նախատեսված դպրոցը երկհարկանի է և ունի նաև նկուղային հարկ, որը ծառայելու է ըստ անհրաժեշտության, որպես ժամանակավոր թաքստոց-ապաստարան: Շենքի ծավալում նախատեսվում է ունենալ 2 փակ ներքին բակ ապակե ծածկի տակ՝ լրացուցիչ ռեկրեացիոն գոտիներին լուսավորություն ապահովելու համար: Առաջին հարկում տեղակայված են 1-ին ից մինչև 5-րդ դասարանների 2-ական լսարանները, նախադպրոցական դասարանը, գրադարանն ու համակարգչային տեխնիկայի կաբինետը, ռազմագիտության կաբինետը, ուսուցչանոց-մեթոդկաբինետը, տնօրենի և փոխտնօրենի աշխատասենյակներն իրենց ընդունարանով, աշխատանքի ուսուցման կաբինետը, բժշկի սենյակը, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, սպորտդահլիճը իրեն կից հանդերձարաններով և մարզիչի սենյակով, ճաշարանը և խոհանոցը, ինչպես նաև թվով 3 սանհանգուցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ: Նախատեսված է նաև սանհանգույց հաշմանդամների համար: Մուտքային գոտուն կից տեղակայված են հաշմանդամների համար նախատեսված ուղղահայաց ամբարձիչը, ծնողների սպասասրահը ինչպես նաև երկրորդ հարկի հետ կապ ստեղծող ամֆիթատրոն: Երկրորդ հարկում առկա են նաև պատշգամբներ: Հարկում տեղակայված են 6-ից մինչև 12-րդ դասարանների լսարանները, 2 լեզվի կաբինետ, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, ռեսուրսային կենտրոնը, ուսուցչանոց-մեթոդկաբինետը, կենսաբանության և քիմիայի մասնագիտացված լսարանը իրեն կից լաբորատորիայով, ֆիզիկայի մասնագիտացված լսարանը իրեն կից լաբորատորիայով, հանդիսությունների դահլիճը իրեն սպասարկող սենյակների խմբով, թվով 4 սանհանգույցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ:

Դպրոցն ունենալու է 36.6 մ x 91.5 մ առանցքային չափեր և սեյսմիկ կարով բաժանված է 2 հավասար մասնաշենքեր: Միջնորմները նախատեսված են 200x400x200 թեթև բետոնի բլոկներից, համապատասխան ամրանավորմամբ: Միջանցքների առանցքային չափը կազմում է 3,5 մ՝ որոշ տեղամասերի լայնացումներով: Դասասենյակներն ունեն 7 մ x 7 մ առանցքային չափեր, իսկ դրանց միջին մակերեսը կազմում է 48 մ^2: Առաջին հարկի բարձրությունը հատակից հատակ կազմում է 3.3 մ: Երկրորդ հակի բարձրությունը փոփոխական է՝ ստորին մասում կազմում է 3.0 մ ծածկի տակ: Սպորտային դահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ կազմում է 7.8 մ, իսկ հանդիսությունների դահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ կազմում է 4.5 մ:

Ջրահեռացումները նախատեսվում է իրականացնել կազմակերպված: Տանիքների թեքությունը կազմում է 7 աստիճան, երկշերտ ջրամեկուսիչով, վերին շերտը պաշտպանիչ մանրավազով, գույնը մուգ մոխրագույն: Տանիքի հարավ նայող լանջին նախատեսվում է տեղադրել արևային մարտկոցներ: Կառույցի արտաքին պատերը իրենցից ներկայացնում են 20 սմ ե/բ կոշտություններ, արտաքին 10 սմ ջերմամեկուսիչ շերտ և 30 մմ հաստությամբ տրավերտինե երեսպատում՝ Ց/Ա շաղախով ամրանային ցանցի վրա: Հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ՝ սանհանգույցներ, թեքահարթակներ, ուղղահայաց ամբարձիչ, ՀՀՇՆ IV-11.07.01.2008 (ՄՍՆ 3.02-05.2003), շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժ խմբերի համար շինարարական նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Տարածքը ցանկապատվելու է, նախատեսելով երկու մուտք, մեկը հիմնական ճակատի կողմից, մյուսը նրանից վեր դեպի հյուսիս արևմուտք:

Տարածքում նախատեսվում է նաև բաց պարսպապատ մարզադաշտ, նոր կաթսայատուն, վազքուղի, երկու մաքրման կայաններ իրենց ջրհավաք կայանով, նաև մեկ հակահրդեհային ջրավազան: Դպրոցից 10 մ հեռավորության վրա դեպի հյուսիս նախատեսված է ապաստարանի ելքը: Դպրոցի մասնաշենքը տեղադրված է լսարանների ՀՍ-ՀՎ կողմնորոշմամբ: Դպրոցին կից եզրամայթը և կենտրոնական մուտքի մոտեցումը նախատեսվում է իրականացնել դեկորատիվ բետոնե սալիկներով, իսկ մնացած ճանապարհները, որոնք հանդիսանում են հրշեջ և այլ հատուկ մեքենաների մոտեցում՝ ասֆալտապատ: Մնացած տարածքը կանաչապատվում է և ունի ոռոգման համակարգ: Տարածքում նախատեսված է նաև լուսավորության համակարգ: Անձրևաջրերի հեռացումը նախատեսվում է թեքությունների հաշվին ուղղել դեպի կանաչապատ տարածքներ՝ հեղեղատար համակարգի բացակայության պատճառով:

Ներկայացվել է բնապահպանական կառավարման պլան, որը պարունակում է շինանրարության և շահագործման փուլերում հնարավոր բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումներ, ինչպես նաև մոնիթորինգ իրականացման գործողություններ՝ ստուգելու շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը նախատեսվող մեղմացնող միջոցառումներին:

Պատճառաբանական մաս. Դպրոցի կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում: Բարեկարգման և կանաչապատ նախագծի համաձայն կստեղծվի 7149.7քմ մակերեսով կանաչապատ գոտի:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ: Բուսականության տեսակային և քանակային կազմը ներկայացված է կանաչապատման սխեմայով: Կանաչապատ տարածքների ոռոգումը կիրականացվի ոռոգման ներքին ցանցի միջոցով՝ օգտագործելով մաքրման կայանի ջուրը, որը կմիացվի ընհանուր ոռոգման համակարգին:

Շինարարության կազմակերպման և շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում իրականացնել պարբերական ջրցան,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացել փակ ծածկով մեքենաներով,

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՖՈՆԴ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- աշխատանքների ավարտից հետո մաքրել բոլոր տարածքները և առաջացած աղբը տեղափոխել համայնքի կողմից հատկացված վայր,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից՝ աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ՝ կահավորված խլացուցիչներով:

Դպրոցի կառուցման ընթացքում, շինհրապարակում և շինհրապարակի հարևանությամբ, նախատեսվում է իրականացնել մթնոլորտային օդում արտանետումների (փոշի, CO, NO_x) չափումներ, աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ, ինչպես նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումներ, որի ընթացքում կպչողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

Եզրափակիչ մաս. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանրային լսումներն իրականացվել են Տաշիր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում: Դպրոցի կառուցման հաշվետվությունը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Փորձաքննության ընթացքում անցկացված հանրային լսումներում բարձրացված հարցերի պարզաբանումները, ինչպես նաև հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացված կարծիքները՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեի և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից՝ հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ, կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝ փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

Փորձաքննական պահանջներ

1. Դպրոցի շինարարության ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
2. Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներն իրականացնել Տաշիրի համայնքապետարանի հետ համաձայնեցված լուծումներին համապատասխան:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքի հետ համաձայնեցված:
4. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի /մշտադիտարկումներ/ կառավարման պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
5. Շինարարական աշխատանքների ընթացքում, համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում, շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայնախագիծ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված Տաշիր համայնքի Տաշիր բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝ Շուշանիկ Կարապետյան